№ 41. Հոկտեմբերի 19 — 1872 — Հոկտեմբերի 19. № 41.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Սրծրունու տուն) և Իվանովի ընթերցարանումը:

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԵՎ ՍԴՈՒՆԵԼՈՒԹԻՆ՝

Մասնատոր յայտարարութիւն ղրկել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ սրծաթ: Յայտարարութիւնները տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանուցումն:—Էդ էր պակաս:—Ներքին տեսութիւն: Թիֆլիսի վաճառականութիւնը: Նամակ Սուրմալուից: Նամակ Իգդիրից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: „Մասիս“ լրագրից: Թիւրքիա: Նամակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր:—Խառն լուրեր:—Առևտրական:—Յայտարարութիւններ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

„Մշակի“ բաժանորդութեան թիւը այս տարի հասնելով 500-ի, այսուհետև մեր հրատարակութիւնը հասարակութեան աւելի մատչելի անելու համար, գալու 1873 թուին երկու ռուբլի պակասեցնելով, տարեկան գինը նշանակում ենք 5 ռուբլի, իսկ վեցամսեակը 3 ռ.:

Բաժանորդագրութիւնը արդէն բացված է:

Օտարաքաղաքացիները պիտի ուղղակի դիմեն խմբագրութեանը այս հասցէով:

Въ Тифлисъ. Въ редакцію армянской газеты „Мшакъ“.

Էդ էր պակաս

Երբ „Մշակը“ հանդէս դուրս եկաւ, նա զլխաւորապէս երկու դրականական երևոյթների դէմ իր պարտաւորութիւնը համարեց պատերազմելու: Մինը բարոյականութեան քարոզներն էին, միւսը փտած ճարտասանական մեթոդն էր, որ անցաւ մեր երկիրը միջնադարեան եւրոպական սկոլաստիկներից:

Մենք աշխատեցինք ցոյց տալ փաստերով (Մշակ № 17) որքան անօգուտ է և հասարակութեան երեվոյթները փոխելու մէջ որքան անզօր է քարոզը: Բայց սա բնութեան օրէնք է, որ գիտութենից զուրկ զլուխը միշտ հակումն ունի դէպի քարոզ: Նա որ չը գիտէ պտուղ առանձին երևոյթներ, հաւաքել նոցա, համեմատել նոցա միմեանց հետ, դուրս բերել նոցա համեմատութենից միջին մի երևոյթ, հաստատել իր հետազօտութեան հիման վրա մի ընդհանուր օրէնք,—նրան ուրիշ ճանապարհ չէ մնում, եթէ ոչ անդադար քարոզները կարդալու, որք ոչ մի հետազօտութեան վրա հիմնած չեն:

×

Երկրորդ պակասութիւնը որ մենք աշխատեցինք վերցնել մեր գրականութենից, յիշելով շատ անգամ մեր հրաւէրքի մէջ թղթակցել ցանկացողներին,—այդ ճարտասանական ձևն էր...

„Երանի թէ“, „ախ ու վախ“ բայականչողներից մենք խնդրեցինք ճիշդ տեղեկութիւններ հաղորդել,—աւելի ոչինչ: Այն նամակներից, որտեղ պատմվում էր ամենաչընչին երևոյթը, օրինակ հասարակ ծխական, փոքրիկ ուսումնարանի բացման հանդէսը գաւառական մի քաղաքում,—նկարագրված էր այնքան փառաւոր, փքված կերպով, կարծես թէ միջազգային ընկերութեան մի նստի մասին է պատմվում, կամ գիտնականների կոնգրէս էր նկարագրվում,—այդ տեսակ նամակներից մենք չոր ու ցամաք տեղեկութիւններ քաղեցինք:

×

Ախ ու վախ քաշողներ, ճարտասանական գրողներ որք միաքը զօհումէին ձևին (և ի՞նչ ձևին), բարոյականութիւն քարոզողներ, որք ուրիշ միջոց չունէին իրանց անձնական անբարոյականութիւնը ծածկելու, եթէ ոչ ուրիշներին բարոյականութիւն քարոզելով,—փտած սկոլաստիկներ, անհամ բանաստեղծներ,—այդ բոլորը հնուց կար մեզանում, և մեզ այլ ևս չէր զարմացնում..

Մենք սորան սովոր էինք...

×

Բայց յանկարծ ներկայ տարվայ ընթացքում անակնկալ կերպով մեր գրականութիւնը հարստացաւ մի նոր ուղղութեամբ, որ հներից անհամեմատ վնասակար է: Մենք ասումենք վնասակար է, որովհետև նորա արդիւնքը, նորա վնասակար պտուղները յայտնի են արդէն եւրոպական գրականութեան մէջ...: Ուրեմն դատել նորա վնասակարութեան վերա մենք միջոց ունենք:

×

Ընթերցող, դուք գիտէք ինչ է փաստաբան (ադվոկատ): Դուք մի քրէական գործ ունէք, կամ մի քաղաքական վէճ. դուք գալիս էք փաստաբանի մօտ և խնդրումէք նորանից դատաստանի առաջ պաշտպանութիւն ձեր հակառակորդի դէմ: Ձեր հակառակորդը նոյն է անում: Երկուսն էլ հաւատացած են, որ արդար են, կամ գոնէ ձևանումեն իրանց այս բանի մէջ համոզված: Մինը ասումէ սև, միւս ասումէ սպիտակ և փաստաբաններից մինը պիտի աշխատէ ապացուցանել թէ գործ սև է, միւսը թէ նա սպիտակ է:

Բայց որովհետև մի և նոյն բանը չէ կարող թէ սև թէ սպիտակ լինել, ուստի փաստաբաններին մնումէ ապացուցանել որ նա ոչ սև է, ոչ սպիտակ, թէև սև է, բայց մի և նոյն ժամանակ սպիտակ է, կամ աւելի լաւ ասենք. թէև սպիտակ չէ, բայց սև էլ չէ, և այլն:

Երկու հակառակ ճշմարտութիւն մի և նոյն առարկայի մասին չէ կարող լինել,—բայց այնու ամենայնիւ կամայ ակամայ պէտք է ապացուցանել որ այս կարող է լինել: Ի՞նչ անես,—սա փաստաբանի փեշակն է...:

×

Նորա գործ գրած դատողութեան մեթոդը բոլորովին հակառակ է ճիշդ գիտութենից գործ դրած մեթոդին: Ճիշդ գիտութեան հետևող մարդը չէ կարող դեռ չը հետազօտած մի ժայռ ասել. ես անպատճառ կամենումեմ ապացուցանել, որ այս ժայռը իր մէջ պարունակումէ պղինձի հանքերը:—Ոչ, նա նախ և առաջ հարցնումէ իրան. չը կայ՞ արդեօք մի որ և է հանք այդ ժայռի մէջ, և եթէ կայ ի՞նչ տեսակ հանք է: Նա իմ արած հետազօտութեան միջոցով յայտնեց այս ինչ յատկութիւն,—չը լի՞նի թէ սա պղնձի հանք է... և այլն:

Փաստաբանը, ընդհակառակն, նախ և առաջ իրան մի նպատակ, մի հետևանք է նշանակում և յետոյ նոր սկսումէ պտուղ, որոնել ապացոյցներ, այն հետևանքին հասնելու համար:

×

Այն մեթոդը, որ ադվոկատը գործ է դնում մի գործ դատաստանի առաջ պաշտպանելու ժամանակ, նա գործ է դնում և գրականական ստեղծվածի մէջ: Ասենք թէ ես յանձն եմ առել կրիտիկայի մէջ պաշտպանել „Մեղուն“, „Մշակի“ դէմ,—ես փաստաբան լինելով, ակամայ ենթարկվումեմ իմ սովորական մեթոդին. ես չեմ կարող հետազօտել „Մեղուի“ և „Մշակի“ արժանաւորութիւնները, որովհետև ես հետազօտելու նպատակով չեմ յանձն առել կրիտիկը, այլ այն նպատակով, որ ապացուցանեմ թէ „Մեղուն“ լաւ է քան թէ „Մշակը“...: Վաղը դուցէ քամին փոխվելով, ես նոյն ճարտարութեամբ կը սկսեմ ապացուցանել թէ „Մշակը“ լաւ է „Մեղուից“.. :

×

Ես կամենումեմ ապացուցանել թէ „Մշակը“ արդէն զզվել է, յուսահատվել է... բայց ապացոյցներ չը կան...բան չը կայ,—կը հնարենք...Մի յօդվածի մէջ հասարակութեան բերանից խօսելով, հեղինակը ասումէր. „Մենք զզվեցինք հասարակական ամենալաւ դործիչներից, որովհետև մեր առաջադէմ մարդիկը նոցա անունը կոտրեցին“:—Ի՞նչ, կանչումէ ուրախացած ադվոկատը, որ գտել է միջոց իր այսօրվայ կլիենտին պաշտպանելու, ի՞նչ դուք արդէն զզվեցիք, այդպէս վաղ, 14-որդ համարը հրատարակելուց յետոյ ..և այլն:

×

Ադվոկատ կրիտիկոսին հարկաւոր է ապացուցանել որ մեզանում չէ կարող հաստատ ուղղութեամբ մի կուսակցութիւն կազմվել, նորա համար իր գործը տանելու համար, անպատճառ հարկաւոր է այդպիսի բան ապացուցանել: Նա չէ կարող հետազօտել, որովհետև եթէ ճիշդ մեթոդը գործ դնելով, նա կը սկսէր հետազօտել, գուցէ կը գտնէր թէ կարող է կազմվել կուսակցութիւն, և գուցէ կը տեսներ որ արդէն կազմվեցաւ,—բայց նորան անպատճառ հարկաւոր է ապացուցանել որ չը կայ ..ուստի նա իր դատողութիւնը նորանով է սկսում, որ մեզանում եղած ուսումնարանները և կրթութիւնը չէին կարող այնպիսի մի հաստատ ուղղութիւն տալ, որ կազմվին համոզմունքները, բայց որովհետև մի և նոյն ժամանակ կուսակցութիւն կազմելու համար պէտք է շատ մարդիկ լինին, ուրեմն ուրուս համալսարաններից դուրս եկած մարդիկը կարող են կազմել մի հաստատ կուսակցութիւն, աւելի բազմաթիւ լինելով քան թէ արտասահմանից եկածները:

Նա չէ ապացուցանում թէ կայ կամ չը կայ...բայց նա ապացուցանումէ որ չէ կարող լինել, որովհետև նորան հարկաւոր է ապացուցանել որ չը կայ...և այլն...

×

Եւ դժբաղդաբար, երբ նոր է սկսել մտնել ճիշդ մեթոդը մեր գրականութեան մէջ, երբ ժողովուրդը դեռ չէ կարողացել գնահատել և հասկանալ նորան,—յանկարծ այդ մեթոդի բոլոր ազդեցութիւնը քանդումէ ադվոկատական դարդակախութիւնը: Ժողովուրդը այնքան անծանօթ է ճիշդ մեթոդին, որ դեռ ևս ոչ ոք չը դուրս եկաւ ճիշդ մեթոդով գրված յօդվածներին հետեվող,—բայց հէնց որ կողմնապահ սոֆիստութիւններով լի ադվոկատութիւնը ցոյց տուեց իրան գրականութեան մէջ, իսկոյն և դաւառներից հետևողներ երևեցան, իսկոյն կարողացան ըմբռնել, սեպհականացնել այդ ձևը.. եւ ճշմարիտ, ի՞նչ կարող է աւելի հեշտ լինել, քան թէ այդ ձևը...այդ ձևին հայը վաղուց սովոր է, այդ նորա ճաշակին յարմար է, նորա բնաւորութեան յատկանիշ է: Հետազօտելու տեղը, ես ինձ նպատակ եմ դնում անպատճառ ապացուցանել, թէ ամառ ժամանակ ցուրտ է լինում իսկ ձմեռը տաք,—և երբ լաւ կը մտածեմ, անպատճառ ապացոյցները կը գտնեմ, միամիտ լինէք...

×

Բայց ի՞նչ է վնասվում այդտեղ,—վնասվումէ առողջ դատողութիւնը:

Դուք շատ էք սովորել,—ասումէր երևելի Պրուդօն հեղինակը, դիմելով Ֆրանսիական ժողովրդին,—բայց մի բան կորցրեցիք. այն է առողջ դատողութիւնը:

Եւ գիտէք ձեզ ով կորցրեց, աւելացնումէր նա,—ձեր փաստաբանական դասը: Ողորմելի և խղճալու արժանի է այն ազգը, որտեղ ադվոկատներ կը լինեն կառավարիչներ, որտեղ նոքա իրանց ձեռքը կը դցեն ազգային գրականութիւնը...նորան սպառնումէ մի բան, վերջացնումէր նա, այն է..առողջ դատողութեան կորուստը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԻՐԱՆՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի վաճառականութեան առաւել մասը գտնվումէ մեր հայերի ձեռին, այսինքն տասը մասից ինները մասը ունեն հայերը, իսկ մնացած մէկը գտնվումէ օտար ազգերի ձեռին:

Եւ այս վաճառականների նոյնպէս առաւել մասը է անուսեալ մարդկերանցից. ուսեալները շատ քիչ են գտնվում մեր վաճառականութեան մէջ:

Նոցանից շատերը չը գիտեն իրանց մայրենի լեզուով գրել ու կարդալ անգամ, ուր մնա այն եւրոպական լեզուները, որոնք ամենայն վաճառականին առաջին պիտոյքն է: Ոչ մի դժուարութիւն չի պատահի, եթէ այսպիսի վաճառականները ունենան իրանց

առևտրական գործերը Թիֆլիսի մէջ։ Բայց ինչ են անում նոցանից մի քանիսը, որոնք գիտեն միմիայն Հայերէն, վրացերէն և քիչ էլ ռուսերէն։ Վեր են կենում և գնում են Անգլիա, Ֆրանսիա կամ թէ Ավստրիա, որտեղ էլ իրանք կամենում են առուտուր անել և մի խօսք կամ տառ չը գիտենալով այլազգի լեզվից, օտար հողը մտնելուն պէս, սկսում են իրանց միտքը ձեռներով իմացնելու, կամ թէ շատ շատ գիտեն մի հիւրանոցի անունը, որտեղ և կարողանում են մնալ մինչև իրանց գործքի վերջանալը։

Եւ եթէ վաճառականը չունէ մէկ բարեկամ կամ ռուս կամ թէ հայ, կամ վերջապէս այլազգի, որ ռուսերէն գիտենար,— այն ժամանակ մնում է մոլորված և չը գիտէ ինչ անէ, մինչև որ յանկարծ կը տեսնէ իր հիւրանոցի դրան առաջը կանգնած մի ֆըրանտ պարոնին, ռուսերէն խօսացող, որ առաջարկում է նրան իրա ծառայութիւնը, դովելով այն տեղի ապրանքը և զարմացնելով վաճառականին գների արժանութիւնով։

Ոչ գիտէ թէ ով է այս ֆրանտ պարոնը,—նա յայտնում է թէ ինքն կոմիսիոներ է և ամենայն վաճառականի գործքերը կարող է կատարել, գիտէ ամենայն ապրանքի տեղերը ու ծանօթ է ամենայն գործատների հետ։ Եւ այսպէս մեր վաճառականը ընկնում է պարոնի ձեռքը ու մէկ երկու օրից յետոյ միասին գնում են զանազան գործատունները։ Ամեն բան կատարվում է ֆրանտ պարոնի ձեռքով. նա գների վերա է խօսում, յայտնում է վաճառականին, թէ որքան պրոցէնտ զեջումն է անում ընդհանուր գումարից գործարանատէրը, փողը վճարվում է; երբ ժամանակը գալիս է, նորա ձեռով. փողի փոխադրութիւնն էլ կատարվում է նոյնպէս նորա ձեռով (և ով գիտէ ինչ արժողութեամբ)։ Ուղարկվում է ապրանքը դէպի Ռուսաստանը դարձեալ նորա ձեռով։

Երբ վաճառականը վերադառնում է Թիֆլիս ու պատահում է իր ընկերների հետ, խօսակցութիւնը ընկնում է ապրանքի գների, պրոցէնտների, զեջումն առած գումարի, ռուսաց փողի օտար փողերով փոխադրութեան մասին,—և յանկարծ մեր վաճառականը իմանում է, թէ նա հարիւրներով աւելի է տուել, քան թէ հարկաւոր էր, թէ նա խաբված է եղել, թէ նորա աւելորդ տված փողը անծանօթ կոմիսիոների գրպանն է մտել...

Ով է մեղաւոր,—վաճառականի ագիտութիւնը։

Շատ ժամանակներ է անցել և կորել մեր վաճառականների համար,— արդեօք հիմա կը սկսէն նրանք ուրիշ ազգերի վաճառականութեանը, ուրիշ ազգերի վաճառականների լուսաւորութեանը նմանվելու։

Մենք չենք ասում իրանք նմանվին, ոչ,— էլ իրանց համար ուշ է...այլ իրանց որդիներանց համար։ որ որդիքը գոնէ հայրերի նման վաճառականութիւնը չը սկսեն։

Վաճառականին հարկաւոր է անպատճառ գիտենալ մի քանի լեզուներ, որք առաւել հարկաւոր են, այն է Եւրոպայի առուտուրի համար՝ անգլիերէնը, ֆրանսիերէնը, գերմաներէնը, իսկ Ասիայի կողմի համար պարսկերէնը և թուրքերէնը։ Բացի սորանից նա պէտք է գիտենայ Աշխարհագրութիւն և հմուտ լինի կատարեալ հաշվագրութեան (գրապահութիւն, բուխգալտէրիա), որ իր վաճառականութիւնը լինի կարգաւոր ու միշտ կարողանայ իմանալ իր օգուտ ու վնասը։

Զենք էլ խօսում այն բանի վերա, թէ վաճառականի, ինչպէս ամեն մարդի համար, հարկաւոր է անպատճառ գոնէ տարրական (սկզբնական) առարկաների դասընթացքի հետ ծանօթ լինել։

Եթէ մենք, Կովկասի հայերս, չը հոգանք մեր մտաւոր զարգացման վերա, մենք նոյն դրութեան մէջ կընկնենք ինչպէս և ընկել են Հնդկաստանի հայերը, որոց ձեռքումն էր Հնդկաստանի բոլոր վաճառականութիւնը, իսկ հիմա իրանց անընդունակութեան պատճառով, բոլորը անցաւ անգլիացոց ձեռին։

Գ. Մեհր...ց

Տպելով այս յօդվածը մենք ընթերցողին յիշեցնում ենք որ „Մշակ" լրագրի 29-որդ №-ում տրվեցաւ „Օտար լեզուների ուսումն և մեր առուտուրը" անունով մի յօդված, որտեղ մենք առաջարկում էինք կազմել մեր վաճառականների համար մի շրջան կամ ընկերութիւն, որի նպատակ կը լինէր՝ ծանօթացնել նրանց օտար լեզուների հետ, դասախօսութիւնների միջոցով։

Խմբ.

ՆԱՄԱԿ ՍՈՒՐՄԱԼՈՒԻՑ

Ես էլ համարեա թէ մի մշակ մարդ եմ, օրէ աշխատող օրէ ապրող. իսկ երբ Ձեր պատուական թերթերից մի քանիսն ընկաւ ձեռքս կարդացի զարմացայ, որ մի վրացի մարդ մեր կողմերի վերայնօք տեղեկութիւն հաղորդած իրանց լեզուով լրագրին որ հրատարակւում է Տֆիխիս քաղաքում։ դուք նրա տուած տեղեկութիւնը բովանդակ գրած չէիք Ձեր թերթերի մէջ. միայն մի բան. այն է որպէս թէ մեր կողմերում միայն բամբակ ցանելու արուեստ գիտեն երկրացիք, ոչ. այդպէս չէ, կարելի է յիշեալ վրացի պարոնը լաւ չի կարողացել զննել մեր Սուրմալուայ ժողովրդեան զանազան արուեստների վրայ պարապելը։ Մեր Սուրմալուայ ժողովուրդը ոչ միայն երկրագործութիւնը անթերի կատարել գիտէ՝ այլ և վաճառականութեան ևս հմտութիւն ունի։ Սուրմալուայ գավառում ամենայն տեսակ սերմ կարող է աճել և պտուղ տալ, և համարեա թէ ամենայն մարդ ամէն տեսակ պտուղ կցանէ։ Սուրմալուայ ժողովուրդը նամանաւանդ հայերը ժիր և գործունեայ ժողովուրդ են։ Ամարնային ժամանակ երկրագործութեամբ կպարապեն, իսկ ձմեռն վաճառականութեամբ և այլ արուեստներով, այնպէս որ ամօթ կհամարեն մի օր մի ժամ պարապորդ անցկացնելը։ Վերջապէս Սուրմալուայ ժողովուրդը նիւթապէս բնաւ կարօտութիւն չունի։ Թէ և Սուրմալուայ ժողովրդեան թիւը օրէ օր բազմանում է, սակայն օրէ օր Սուրմալուեցիք աշխատում են կանոնաւորել իրանց կեանքի սահմանը։ Ես շատ երկիր շատ տեղ շրջագայած ունեմ. բայց ոչ մի տեղ Սուրմալուեցւոց պէս ժիր և աշխատասէր ժողովուրդ տեսած չեմ։ Սուրմալուայ ժողովրդեան պակասութիւնը մտաւորական կուրութիւն է, որոնք այդ բանում շատ հետամնաց են։ Սորան ևս մի պատճառ կայ, էն թող մնայ, նրա վրայ ուրիշ անգամ. և կամ ինձանից մի խելօք մարդ ժամանակաւ կարող է գրել և հրատարակել։ Մեր Սուրմալուայ գաւառը ունի քսան և երկու հայ գիւղօրայք, որոց գլխաւորը և բազմամարդը Իգդիր և Կողբ գիւղն է, նոքա ևս ժամանակաւ ուրիշ կողմերից գաղթուած եկած այստեղ կբնակեն։ Իգդիրցոց պարապմունքը մեծ մասամբ վաճառականութիւնն է։ Իսկ Կողբացոց՝ երկրագործութիւնն ու աղահանքում մշակութիւն անել վարձով։ Սուրմալուայ ժողովրդեան ժրաջանութիւնը թէ գաւառի դիրքը՝ թէ հողի արդիւնաւորութիւնը, թէ ջրերի շատութիւնը. թէ այդիների պտղատուութիւնը, և թէ օդի առողջարար ներգործութիւնը միմեանց հետ համապատասխան են։ Գաւառը ինքը տափարակ տարածութիւն ունի. մի ձիաւոր մարդ երկու օր հաղիւ կարող է չափել նրա սահմանը։ Այս գաւառի արևելեան կողմի սահմանը մեր հին աւուրց ծերացեալ Մասիս լեռն է. արևմտեան կողմը Բարդող լեռը. հարաւային կողմը Մասիս լեռան շղթաները. իսկ հիւսիսային կողմը Երասխ գետը իր հանդէպն ունենալով Արադած մեծ լեռը։ Գաւառիս հողը կը ոռոգուի Երասխ գետի ջրից։ Երկու գաւառ միայն Երասխ գետի ջուրը կընդունի իւր հողերը ջրելու, այն է Սուրմալու և Սարդարապատ։ Էլ հարկ չկայ ասել, որ Երասխ գետը Հայաստան աշխարհի գլխաւոր գետը համարուելով և մանաւանդ դրախտից բխուած, նրա ջուրը շատ առողջարար կարող է լինել։ Երասխ գետը գարուն ժամանակ մարտ ամսէն սկսեալ մինչ ցյունիս կսկսի շատանալ սարերի ձիւնը հալուելով։ Վերջին աստիճանի ջուրը կպտորի. բայց մի և նոյն ժամանակ պարզ եղած միջոցի ներգործութիւնը ցոյց կտայ, այն ինչ Հրազդան և Մեծամօր և այլ գետերի վրայ բնակուող ժողովուրդը թէև պարզ ջուր խմելով տարին ի բուն ցաւօք և հիւանդութեամբ օրեր կմաչեն։ Սուրմալուա ժողովուրդը կցանի ցորեն, դարի, կորէկ, կտաւատ բամբակ, հաճար, դէրչակ և շատ սերմօրայք։ Եւ մարդ կզարմանայ այս ժողովրդեան արիաջան աշխատութեան վրայ, որ օրը մինչ իրիկուն, արեգակի կիզիչ ներգործութեան դէմ, արիւն քրտինք մտած, դեռ ուրախ ուրախ երգերով, կցնծան կուրախանան։ Երբ գարունը կբացուի՝ կտեսնես աղջիկ, հարս, խումբ խումբ դաշտերի մէջ սփռուած, բանջարներ քաղելով, երգերով մարդ կզմայլացնեն. որպէս իրանց չբօսանաց ժամանակ, այնպէս է և քաղհան անելու միջոցը։ Մարդ կայ որ երկու արտ բամբակ և սուսամ ցանած ունի, նրանք պէտք է իւր տան ընտանիքը խնամեն, բացի հնձելուց։ Աշխատասէր ժողովուրդ, որոնք իրանց արդար վաստակով իրանց ընտանիքը անկարօտ պահպանելէն զկնի՝ իւրեանց միւս պարտքերը լրիւ կկատարեն։ Սրտիս ցաւ եղած է երբ կտեսնեմ Սուրմալուայ ժողովրդեան նիւթական յաջողակ կեանքի հետ չկայ մտաւորական աշխատութիւն, որոնք կարծես թէ կախարդական մի բան են համարում կարդալ գրելը։ Այս գաւառի ժողովուրդը շատ սրամիտ է հասկացողութեան մէջ, այնպես տաղանդի և առողջ բանականութեան տէր մարդ կայ, որ կզարմանայ մարդ երբ նա իւր միտքը կարճ ոճով կարտայայտէ։ Սուրմալուայ հայ ժողովրդեան լեզուն միմեանցից տարբեր է, օրինակի համար, Իգդիրցին „արի" ասելու փոխանակ կասէ „եարի" Ալիդջլի գիւղացին կասէ „արե"։ Իգդիրցիք Սալամատու գաւառից 1828 թուի Ռուսաց և Պարսից պատերազմի եղած ժամանակ գաղթուած եկած են. որոց լեզուն շատ դժուարահասկանալի է" ինչպէս, „ՀՎ է" ասելու փոխանակ կասեն „վՀՎի" և շատ այդպիսի զեղծեալ բառեր։ „Ուր" բառը կասուի „ՀՒր" մի տեղ կհնչուի „ՀՀուր" մի տեղ կարտաբերուի „տՀր" այսպէս է և ուրիշ բառեր։ Սուրմալուայ գաւառում անտառ չկայ բայց և շատ ծառեր կան տնկած, որոց առաջինն և պիտանին կարող է համարուել բարդի ծառը որը ուղղահայեաց բարձրութեամբ մինչև տասն և հինգ արշին կբարձրանայ. դինին աւելի զօրաւոր չէ, թէ և շատ խնամք կտանեն տեղացիք այդիի վերայ։ Նոր նոր սկսել են թթենի ծառեր տնկել չերամի որթ պահելու համար։ Անուանի է Սուրմալուայ գաւառի որդան կարմիր ասուած ներկը. որ շատ քիչ մարդ կհետևի ձեռք բերելու։ Շատ երկրում ես տեսած եմ շաբաթը երկու անգամ— իրանց տաւարներին աղ կտան պարարտանալու և ախորժակով կեր ուտելու համար։ Բայց մեր Սուրմալուայ գաւառը իւր աղաւուն բոյսերով ամէն տեսակ անասնոց աղի փոխանակ նրանց կարօտութիւնը կլցնէ։ Հողը առհասարակ զօրաւոր է. եթէ երկու երեք անգամ ցանած բոյսերը ջրուեն՝ իրենց պտուղները առատօրէն կարդիւնաւորուի։ Ցորենի հացը թէպէտ մի փոքր սեագոյն տեսք ունի՝ բայց շատ համով է։ Երկիրը կհերկեն մեծ մասամբ գութանով որ չորս զոյգ դոմէշ կլծուի. իսկ արօրը երկու լուծ կամ մի։ Պէտք է ասել որ դեռ եւրոպական հնարաւոր մեքենաներ չի գտնուում տեղս որով փոքր ինչ թեթևանայ երկրագործաց աշխատանաց միջոցը։ Սուրմալու գաւառում կան Պարսիկ և Քուրդ աղգեր, որոնք բոլորովին զուրկ են մեր հայերի ընդունակութիւնից։ Առաջինները հայերի հացը չեն ուտել, իսկ վերջինները անխտիր կուտեն. և պատահած ժամանակ հաց տուողի տունը վայրենաբար կը կողոպտեն։ Սոցա մեծագոյն մասը թափառական կեանք կվարեն, այսինքն ամառ ժամանակ լեռները ապահովութեան կգնան, իսկ ձմեռը գիւղերումցրուած վարձով տներ բռնած կնստեն, սպասելով գարնան իրենց տեղափոխութեանն։ Էս բանը մեր հայերի վրայ շատ թանգ կնստի. շատ անգամ, որովհետև քրդերը ծանօթանալով տեղացի հայերի հետ և նոցա նիստ ու կացին. երբ որ գարունը կչուին դէպի սարերը՝ (միշտ անհաշտ են հայերի հետ) գիշերները կգան ծանօթ մարդի տունը կկողոպտեն կտանեն։ Պարսիկները միշտ անհաշտ են հայերի հետ։ Համեմատելով սոցա քրդերի հետ՝ քրդերը շատ ներողամիտ են։ Կայ մի քանի հարիւր տուն եզդի (արեւորդիք) որոնք հայերէն լաւ խօսել գիտեն և սերտ մտերմութիւն ցոյց կտան հայերին։ Այս թշուառ աղգը դեռ հին նախապաշարմունքով սատանայական խումբին հաւատ կընծայեն որպէս դերագոյն Արարչի։ Հայերը էնքան չեն խորշել գորանցից. իսկ քրդերը և պարսիկները առհասարակ կատեն որպէս մի վատթար էակ։—Սուրմալուա հայ ժողովուրդը լաւ հիւրասիրութիւն ունի, ունի նաև ջերմ կրօնասիրութիւն, աղքատ մարդ ինչ աղդ էլ որ լինի. Սուրմալուայ հայ ժողովուրդը նրան իւր նուէրքը լիասիրտ կտայ։ Սուրմալու գաւառը որ Արշարունիք ևս անուն կկրէ՝ իւր վրայ. Արարատեան չնաչխարհիկ նահանգի մի մասն է. կը խօսէ այս երկրի վրայ մեր ճարտասան Ղազար Փարբեցին. և գերմանացի երևելի ճանապարհորդ Վագները. որոնք սրատես հայեցողութեամբ զննելով երկրի և բնակչաց հանգամանքը լրիւ կտակած հրատարակած ունեն։ Սուրմալուայ գաւառի մէջ մեր հին հայոց աւերակներէն կայ այժմ Երևանդակերտ որ Ղարաղալայ կկանչեն. կայ Օրկով հին գիւղաքաղաքը, որ նրա զերեզմանաքարերն այսօր կվկայեն ինքը մեծ աւան լինելու համար. դժբաղդ Ակոռին որ հողափլատակի տակ՝ ամբողջ գիւղը զերեզմանացած է։ կայ Ցոլակերտ քաղաքը, որ հաղիւ կիմացուի իւր երևելի լինելը, և շատ աւերակներ ու վանօրայք. որոնց անունները ես չկարողացայ գտնել հայ պատմագրութեանց մէջ։ Ռուսիոյ և Օսմանեան սահմանագլխին մօտիկ մի մեծ քարաշէն պանտոկ կայ, որին այժմ քարվանսարայ կանուանեն. հետաքրքրութեամբ կամեցայ մի արձանագրութեան նշան գտնել նորա վերայ. չգտնուեցաւ. ինձ այնպէս կթուի թէ հին ժամանակաւ Արշակաւան քաղաքից դէպի Անի և այլ կողմեր ճանապարհորդաց իջևան եղած լինի։ Ցիշեալ պանտոկից մի փոքր հեռու արևելեան կողմը կայ կիսաւեր Կամրջաձորու վանքը, որ նրա բոլորտիքը քրդեր բնակուած՝ Զօռ անունը կտան։ Ռուսաց պահապան զօրաց մի մասը այնտեղ կնստի դէպի Ցաճկաստան ճանապարհ ունենալու համար։ Այժմ նոր վիճակի բաժանմամբ Սուրմալու Երևան նահանգի գաւառներից մէկն է, բայց ամենէն զբաղաւորը արդիւնաւորը և միայնգամայն պանծալին սա է. որ ուչ մի բանով պակասութիւն չունի, որ եթէ Աստուած տայ այսուհետև սկսուի բարոյական և մտաւորական աշխատասիրութիւնը տեղացւոյ մէջ, էն ժամանակ Սուրմալու Կովկասեան երկրի մէջ երևելին կհանդիսանայ։

26-ն օգոստոսի Մկրտիչ Շաւարշեանց

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

Սուրմալուի բոլոր վիճակում հացը այս տարի լաւ է աճողվել և առատ է, որովհետև արտերից չէր պակասում Արաքսից բերած ջուրը։ Բայց այժմ ինքն Արաքսը գրեթէ մի ցամաքած գետակ է ներկայացնում։ Սա մի զարմանալի իրողութիւն է, և այդ տեսակ տարի ծերունիքը անգամ չեն իշում։ Մեր գիւղում կարծիք կայ, որ իբր թէ թիւրքաց տէրութիւնը Արաքսի տաչտը (բուսլօ) իր երկրի վերա է դարձել և այսպիսով չորացրել է գետի մէջ եղած բոլոր ջուրը։

Սարերի վրա ցորէնը անձրևի պակասութեան պատճառով, բոլորովին չորացել է, այն ինչ աջող տարիներում նա մեծ առատութեամբ է հնձվում այն տեղերում։ Խոտը նոյնպէս այրվել է և մեղ զգալի է այժմ խոտի պակասութիւնը։ Ցորէնը, չը նայելով որ դիները չեն հաստատվել, օրէցօր թանգանում է։ Ամենալաւ Սարդար-Աբադի, բոլոր Երևանի գաւառում իր ապիտակութեամբ յայտնի ցորէնը, արժէ այժմ խալվարը 25 ռուբլի և աւելի։ Ցած տեսակ ցորէնը ծախվում է 18-ից մինչև 20 ռուբլի խալվարը։

Վերջապէս կասեմ քանի մի խօսք և մեր ուրիշ արդիւնքների մասին։ Բամբակը, որ շատ է ցանվում այստեղ, դարձեալ վաճառականութեան նշանաւոր ճիւղ չէ կազմում մեր երկրում։ Նա հանվում է Թիֆլիս և Թիւրքիայի զանազան քաղաքները, ինչպէս Էրզրում, Կարս, Կ. Պոլիս և այլն։

Մնացած արդիւնքներից նշանաւոր են դարի, քունճուտ, կորէկ և ծխախոտ որ թէև լաւերից է համարվում, բայց որովհետև նրան տեղացիք շատ չեն ցանում, բաւականանում է միայն տեղի գործածութեան համար։

Տեղական գիւղական տնտեսութեան մի շատ տարածված ճիւղը ի հարկէ այգեգործութիւնն է։ Ամեն մի փոքր ի շատէ ունևոր գիւղացին ունէ իր այգին։ Խաղողի այգիները մեծ քանակութիւն խաղողի են բերում, որից մի մասը գործ է դրվում գինի և օղի չինելու, իսկ միւս մասը ծախվում է։ Այստեղի խաղողը կարող է իր յատկութիւնների կողմից համեմատվել Երևանի և Գանձակի խաղողի հետ։ Իսկ գինին իր վատ պատրաստութեան պատճառով միջակ և անգամ վատ կարող է համարվել, թէև մի քանի փորձված և հմուտ այգետէրերը կարողանում են պատրաստել համեղ և դուր եկան գինի։ Ուշադրութեան արժանի են մեր մրգերը, ինչպէս օրինակ դեղձ և չլոր, որք իրանց խոշորութեամբ և պատուական համով առհասարակ լաւերից են համարվում։ Բոստանների բոյսերից ունենք շատ ձմերուկ, սեխ, և այնպէս անվանված դուբմա սեխի լաւ տեսակը։ Բացի տեղական գործածումից, այս այգեգործութեան բերքերը մեծ քանակութեամբ սահմանից դուրս են տանվում թափառական Քիւրդերի ձեռքով։

Նիկողայոս Կոկչայեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեղ գրում են Ելիսավետպոլից, որ նորերումս վախճանվեց տեղոյս Հոգևոր դպրոցի Հոգաբարձուներից մինը Սիմէոն Իւանիչ Լազարեանցը։ Հանգուցեալը իր հայրենակիցների համակրութիւնը միշտ գրաւած ունէր։

—

Գետաչէն գիւղից գրում են մեզ, „քանի շաբաթ է մենք մի պարզ օրի կարօտ ենք մնացել։ Ամսիս 7-ին, առաւօտեան 6 ժամին այստեղ մի թեթև երկրաշարժ եղաւ“։

—

Մեզ հաղորդում են յետադայ ծանօթութիւն, որի պատասխանատուութիւնը թողնում ենք գրողին։

Հաղբատայ վանից վանահայր Յովսէփ վարդապետ Խարազեանցն 1865 թուից սկսած, մինչև 1870 թ. բացարած է ունեցել յիշեալ վանից մէջ կարգաւորված ուսումնարան ուսուցիչներով, և մինչև 35 աղքատիկ և խեղճուկ երեխայք թէ հեռաւոր և թէ մերձաւոր տեղերից եկած, ուսանում էին ձրիաբար հայոց և ռուսաց լեզու և քանի մի առարկաներ։ Վանահայրն Թիֆլիս քաղաքում մի քանի անձինք էր գտած բարերար անունով, որք իւրաքանչիւր տարին 10 ռուբլի արծաթ էին հատուցանում օգուտ ուսումնարանին, որոց անուններն լրագրաց միջոցով յայտնած էին։ Այս սակաւ գումարով կառավարվում էր յիշեալ ուսումնարանն և վարդապետն ինքն ևս ձրիաբար դասատուութիւն էր անում։ Խարազեանց վարդապետն բացի ուսումնարանից չինեց վանքում գեղեցիկ սենեակներ միաբանից համար, և Հաղբատայ ամենադժուար ճանապարհն ևս չինեց, 12 վերստի չափ հանելով նորան ձորագետի մօտ ու կամեցաւ նոյն գետի վերա քարակրեայ կամուրջ չինել, որ Աւագ սուրբ նշանին գնացողներ և հնութեան յիշատակներ տեսնել ցանկացող անձինք քաղաքից սայլով կարողանային գնալ։ Երբ կամուրջի մի կողմի որմն աւարտվելու էր, այդ միջոցին Աբրահամեան Սեբրոսէ եպիսկոպոսն նշանակվեցաւ Հաղբատ վանքի վանահայր, իսկ Յովսէփ վարդապետն ուղարկուեցաւ Գորի յաջորդ։—Հաղբատի վանքն իսկ և իսկ մանելու օրն Սեբրոսէ եպիսկոպոսն արձակեց ուսուցչին իր պաշտօնից և ուսումնարանի դուռն փակեց, և զրաստեղներն հանելով ուսումնարանից, նորա մէջ բաղանիս չինեց....և ահա տարի ու կէս է որ ուսումնարանը փակած է։

—

Ղուբայից հաղորդում են մեր լրագրին, որ օգոստոսի 12-ին երեկոյեան ժամը 9-ին քաղաքի վերի կողմում այրվում էր մեծ քանակութեամբ դիզուած չոր խոտ։ Հենց որ կրակի բոցը փոքր բարձրանում է ու կարմրութիւնը նշմարվում է երկընքի վերա, ողորմելի ժողովուրդը հուսահատված դէս ու դէն է ընկնում աղաղակելով. „վայ աշխարհիս վերջը, վայ աշխարհիս վերջը“։

—

Ս. Պետերբուրգում պէտք է շուտով հրատարակվի մի նոր ֆրանսիերէն լրագիր „La Néva“ (Նէվա) անունով։ Ասում են որ և Թիֆլիսում դիտաւորութիւն ունեն ֆրանսիական լեզվով մի թերթ հրատարակել, օտարազգիներին Կովկասեան հանգամանքների հետ ծանօթացնելու համար։

—

Թիֆլիս—Փոթի երկաթուղին արդէն բացված է։ Հոկտեմբերի 10-ին առաջին գնացք հեռացաւ առաւօտեան 7 ժամին, 56 բոլէին։ Նա պիտի հասնէր Փոթի երեկոյեան 11 ժամին։ Տեղերի գինը այս է. մինչև Փոթի 1 դաս ամէ 13 ռ. 5 կ. երկրորդ դաս,—9 ռ. 79 կ. և երրորդը 5 ռ. 44 կ.։ Այդ գիները, տարածութեանը նայելով, համեմատելով անգամ ռուս երկաթուղիների հետ, շատ թանգ են։

—

Փոթի-Թիֆլիս երկաթուղին սկսեց իր երթևեկութիւնը,—բայց առաջին փորձը բաւական յուսահատական է։ Սուրամի վերայով անցնելով նորերումս մշակների մի գնացք շուռ եկաւ ու ասում են որ մօտ 10 մարդ սպանվեցան։ Մէկ երկու երեք օրից յետոյ պատմում էին դարձեալ մի դժբաղդ դէպքի մասին։ Ինչու մեզանում եւրոպական ամենալաւ հիմնարկութիւնների անունը կոտրվում է, նոցա վատ գործադրութեան ու մեր սեփական անհոգութեան պատճառով։

—

Այժմ Ռուսաստանում հրէաներին արդելված է շաբաթ և տօն օրերի նախընթաց օրերը խմբով հաւաքվել բնակարանների մէջ։ Նորերումս Ս. Պետերբուրգի հրէաների մի խումբ խանդարեց այդ կանօնը սեպտեմբերի 29-ին հաւաքվելով մի բնակարանի մէջ. Նոցա կալանաւորեցին, որպէս իշխանութեան հրամաններին ընդիմադրող մարդիկներին, և պրիստաւը ներկայացրեց կալանաւորներին ոստիկանութեան գլխաւոր պաշտօնեային (օբէր-պոլիցէյմեյստէրին)։ (Голосъ. № 154)։

—

„Մեղուն“ գրում է. լսում ենք որ Ներսիսեան աղջկայն հոգևոր ուսումնարանի նորընտիր հոգաբարձուներին բարեհաճել է Նորին Վեհափառութիւնը հաստատել։ Լսում ենք, նոյնպէս, որ ամսոյս 22-ին կիւրակի օրը, վանքի մայր եկեղեցում ի լուր ժողովրդեան հանդիսով կը կարդացվի նորին Օծութեան կոնդակը, որից յետոյ հին հոգաբարձուք ի ներկայութեան տեղւոյս առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի կը յանձնեն դպրոցը նորահաստատ հոգաբարձուաց։

—

Ամսիս 17-ին, երեքշաբթի օրը Թիֆլիսի մեծ թատրոնում հայ-սիրողների խումբը ներկայացրեց „Հարմակ և Աշխէն“ գործ Ս. Հաքիմեանցի, և „Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք“ վոդէվիլը։—Ուրիշ անգամ կաշխատենք խօսել այդ ներկայացման մասին։

—

Նորին Կայսերական Բարձրութիւնը, Կովկասի փոխարքան ամսիս 14-ին Բօրժոմից վերադարձաւ Թիֆլիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ուխտաղնացութիւն ու քօլէռան շատ անգամ այն աստիճան սերտ յարաբերութիւն ունեցած են, որ Ռուսիոյ բարեպաշտոննեռուն ամեն տարուան պէս այս տարի ալ խուռն բազմութեամբ Կիէվ քաղաքն ուխտի երթալուն առթիւ ռուսական իշխանութեանց կրած երկիւղը դիւրաւ կրնամք մեկնել։ Ինչպէս որ անգղիական Լանսէթ լրագիրը դիտել կը տայ, Հնդկաստանի Հիւրվար, Ժիւկէրնութ, Քօնժէվերամ և Բանտերբուր քաղաքները, Պարսկաստանի Մէշէտ քաղաքը, արաբիոյ Քերպէրա և Նէշտ քաղաքներն և Մէքկէ ու Մէտինէ եղած ուխտաղնացութիւնը շատ անգամ քօլէռային զարհուրելի կերպիւ ճարակելոյն պատճառ եղած են։ Կրօնամոլութիւնը կենաց մանր խնամքները կարհամարհէ։ Արևելից ճգնաւորներն առաւել իրենց սրբութեամբ անուանի էին քան թէ մաքրութեամբ։ Շատ հաւանական չէ որ Ս. Պետրոս ճգնաւորը բաղնիք երթալոյ կամ ակռայի վրձին մ'ունենալոյ հող տարած լինի։ Տաճկաց մարգարէն՝ Ս. Քարին ուխտի գնացող բարեպաշտներուն՝ անապատին մէջ հանդերձից մաքրութեան վերաբերեալ կանոններ թողուցած չէ։ Նոքա սուրբ պէտք է լինին. մաքուր լինելոյ պէտք չունին։ Արքայութիւն երթալու համար հաւատացելոց անցնելիք մեռաքսեայ թէլէ նեղ կամուրջը պահպանող հրեշտակը՝ նոցա շապկին առաւել կամ պակաս մաքրութիւնը չը պիտի հարցնէ։ Ս. տեղեաց այցելութիւն ընողներուն համար՝ ձեռուրնին մաքուր պահելոյ կամ լուալոյ յատուկ պատուէր մի չը գրոշուելով, բարեպաշտ ուխտաւորք բնականաբար Ս. Քարն իրենց շրթունքով համբուրելոյ մտածութեամբ միայն կը զբաղին՝ քան թէ պաղ ջրով իրենց մարմինը մաքրելոյ։ Ուստի խուռն բազմութեամբ Մէքկէ կը դիմեն մահմէտականք, ինչպէս միջին դարու քրիստոնեայք Ս. Գերեզման կը դիմէին։ Ամեն տեղ ննջելով, Կուրանէն չարգիլուած ամեն բան ուտելով, շաբաթների 'ի վեր հանդերձ չը փոխելով Քառանթինայի մթնոլորտը տարին 'ի Մէքկէ, հարիւրներով Ս Քաղաքին փողոցներուն մէջ ինկան, և կարաւաններն ետ դարձած ժամանակին ճանբաներուն վրայ հաւատացելոց դիակներ ցանեցին, որք երջանկութեան վայրկենին մեռած էին։ Կարավանին հանդիպած առաջին քաղաքին մէջ քօլէռան իւր բոլոր ուժովն երևան կելնէր, անկէց կը ծաւալէր Արևելից քաղաքներն, յետոյ 'ի Կ. Պոլիս, և վերջապէս Եւրոպա կը մտնէր, և այս կերպիւ քրիստոնեայ երկիրներն հաղարաւոր կեանք տուրք կը վճարէին Մահմէտական սրբութեան։ Բայց մահմէտականութիւնը չէ միայն որ բարեպաշտ ճանապարհորդին պարկոշն այս պատուհասը կը պատճառէ.

. . . . . .

Այս տարի ալ մեծ վախ կայ որ Կիէվ քաղաքն հիւանդութեան սերմն աշխարհի չորս կողմը չը ծաւալէ։ (Մասիս)

ԹԻՒՐՔԻԱ

Սեպտեմբերի 27-ին (Հոկտ. 9) Կ. Պոլսի Թուրքերի և պարսիկների մէջ սաստիկ կռիւ պատահեց, այնպէս որ զօրքը ստիպվեցաւ այդ խառնութեան մէջ միջնորդ լինել։ Երեք պարսիկ սպանված են, 30-ի չափ վիրաւորված և շատերը կալանաւորված։ Կ. Պոլսի բնակիչները մեծ զրդռութեան մէջն են։ Թուրք զինուորականներէն էլ մի տաս հոգի վիրաւորված են։

„Indèpendance Belge“ լրագիրը ասում է, որ Մահմուդ-փաշայի, առաջվայ մեծ վեզիրի դրութիւնը օրէցօր վատանում է։ Կազմվեցաւ մինիստրների խորհուրդը Միդհատ-փաշայի նախագահութեամբ, անցեալ մեծ վեզերէն աւելորդ ծախսած կամ վատնած ահագին գումարը (100 հազար ֆունտ ստերլինգ) յետ պահանջելու համար։ Սուլթանը նորամէ յետ առաւ Թանզագին քարերով զարդարած իր պատկերը, որ առաջ ընծայած էր նրան մեծ վեզիրի պաշտօնը վարելու ժամանակ։

Գերմ. „Allgemeine Zeitung“ լրագիրը ասում է որ Թիւրքիայի մէջ ծխախոտը զանազան պատճառներով դառել է հասարակական պահանջողութիւն. նախ որ այդտեղ ժողովրդին ծանօթ չեն սուրիշ հասարակական զուարճութիւնները, մի և նոյն ժամանակ օրէնքով արգելված են խմիչքները, երկրորդը որ քաղաքի անմաքրութեան պատճառով Կ. Պոլսում ծխելը դարձել է մի տեսակ միջոց օդը քիչ շատ մաքրել դարշահոտութիւններից և առողջութեան համար վնասակար գոլորշիներից։ Թիւրքիայի ծխախոտը չունի այն վնասակար յատկութիւնը ինչպէս ունի ուրիշ տեսակ ծխախոտը։ Իսկ այժմ երբ տէրութիւնը սեպհականացրել է իրան ծխախոտի մենավաճառութիւնը, կապալու տալով քանի մի բանկիրներին այդ վաճառքը 2,400,000 թալէրով (մօտ այսքան էլ ռուբլի) ծխախոտը անչափ թանդացաւ, և առնողները չեն տեսնում վաճառքը որովհետև ծախվում է բանդէրօլով կնքած։ Ծխախոտի յատկութիւնն էլ փչացաւ։ Մենավաճառները էլ դիմեցին Միդհատ-փաշայի մեծ վեզիրին, օգնութիւն խնդրելով նորամէ զանազան սպառնալիքների դէմ և վեզիրը խոստացաւ կախ անել տալ ամեն անհատին, որ կը համարձակվի սպանել մենավաճառների ընկերութեան մի անդամի։

ԺԴ. ՆԱՄԱԿ

Պ. Բաֆֆիի ուղևորութիւնից Պարսկաստանում։

—

Հետեւեալ աւուր առաւօտեան, դուրս գալով Նախիջևան-թափէից, ես ուղևորուեցայ դէպի Ուրմի քաղաքը։ Մեր ճանապարհը ձգվում էր խաղողաբեր այգիների, բամբակի արտերի և բրնձի դաշտերի միջով։ Ես չէի տեսանում անմշակ թողուցած հող, երևում էր, որ երկրագործութիւնը շատ ծաղկած էր այդ դաւառում, թէև իւր նահապետական դրութեան մէջ։

Ես տեսանում էի, այր, կին, երեխայ, ծեր և երիտասարդ բոլորն գործում էին։ Մի բան միայն զարմացնում էր ինձ, որ Պարսկաստանում հայ կանայք, հետևելով մահմետականների սովորութեանը, ման են գալիս ծածկուած երեսներով, իսկ այստեղ ընդհակառակն ես տեսանում էի նորանց բոլորովին արձակ, համարձակ վարվում էին տղամարդերի հետ։ Այդ սովորութիւնը մտած պիտի լինի տեղային Հայերի մէջ Ասորիներից, որոց կանայքը բաւականին ազատ են ընտանեկան սրբութիւնից։

Կէսօրին ես հասայ Ուրմի քաղաքը, նա շրջապատած էր, որպէս Պարսից շատ քաղաքները, պարիսպներով, աշտարակներով և դրսից բաւականին խորն ընկած խրամով, որ ջրով լիցնում են պատերազմի միջոցին։ Նանա-Մէյրամ (մայր Մարիամ) կոչուած հայաբնակ թաղում իջևանեցի մի Ասորու տան։

Պարսկաստանում հիւրանոցներ չը կան. մի քաղաք մտանելով ստիպուած ես, կամ կեխտոտ քարվանսարաներում իջևանել, և կամ մանաւոր տներում։ Մահմետական ընտանիքը քրիստոնեային տեղ չի տալ իւր տանում. մնում են քրիստոնեայք և հրէաները, որք ամենայն սիրով ընդունում են օտարականին իւրեանց բնակարաններում։

Մի փոքր հանգստանալուց յետոյ, ճանապարհի փոշին ինձանից սրբելուց յետոյ, երեկոյեան պահուն, ես այցելութիւն գործեցի ամերիկացի Պօրտ ընկերութեան միսսիօնարների տանը, որ կենում էին այդ թաղում մի հոյակապ, եւրոպական ճաշակով շինուածքի մէջ։

Մտանելով նոցա բակում, Պարսկաստանում առաջին անգամ հնչեց իմ ականջներին պիանօի ձայն, այդ ձայնը կախարդապէս յարոյց իմ սրտում վաղեմի զգացմունքները, ես երևակայումէի, թէ գտանվում եմ Եւրոպայում։

Մստեր Պերկին անունով ծերունի քարոզիչը, աստուածաբանութեան վարդապետը ընդունեց ինձ իւր մօտ։ Նա մի բարձրահասակ մարդ էր սպիտակ մորուքով, ազնիւ և պատկառելի դէմքով։ Եւ շատ վարժ խօսում էր թուրքերէն, Ասորոց և Եբրայեցոց լեզու։

Մի քանի սովորական զրոյցներէն յետոյ, որ մարդիք գործ են ածում տեսութեան առաջին բոպէներում, ես հարց արի միսսիօնարէն, թէ որպէս էր յառաջ դնում նոցա գործը Պարսկաստանում։

—Տիրոջ գործը ամէն երկրներում յառաջ է գնում յաջող կերպով, առաւելապէս Պարսկաստանը կարող է նորա պտղաբեր հողը դառնալ։ Պատասխանեց քարոզիչը ինքնաբաւական վստահութեամբ։

—Որ ազգերի մէջ գործում էք դուք։ Հարց արի ես։

—Առաւելապէս Ասորիների մէջ, իսկ մասնաւորապէս Հայերի և Հրէաների մէջ։ Պատասխանեց նա։

—Հայերը և Ասորիները արդէն քրիստոնեայներ են, ասացի ես. ինչու չը գործել Պարսիկների, և Թուրքերի մէջ։

—Միայն քրիստոնեայ կոչումը ունենալով չէ նշանակում ճշմարիտ քրիստոնեայ լինել։ Մեք աշխատում ենք պատրաստել Հայերին և Ասորիներին, որպէս զի նոցա ձեռքով կարօղանամք ներգործել ասիական միւս ազգերի վերայ։

—Դուք աւելի խստութեամբ էք գատում Հայերի և Ասորիների վերայ, նորանց քրիստոնեաներ չը համարելով։

—Դուք երևի չը հասկացաք ինձ, պարոն, Ասաց Քարոզիչը մեղմութեամբ։ Այո, նոքա կոչվում են քրիստոնեաներ, բայց թէ որքան կատարում էին նոքա քրիստոնեայի պարտաւորութիւնքը, եթէ թոյլ կը տայիք, ես կը պատմեմ ձեզ մի քանի խօսք նոցա անցեալից։

—Մեծաւ ուրախութեամբ լսում եմ.

—Մեք եկամք այստեղ 30 տարի յառաջ, և զբաղվում էինք Հայերին և առաւելապէս Ասորիներին ամենաթշուառ դրութեան մէջ։ Նոքա չունէին ոչ տպագրուած գրքեր և ոչ ուսեալ եկեղեցականներ։ Նոցա նախնեաց հոյակապ գրականութիւնից այս և այն քահանայի տանում գտանվում էին միայն սուրբ գրքի հատորներ մագաղաթի վերայ գրուած, հին անհասկանալի լեզուով, այն ևս, ոչ թէ կարդալու համար, այլ փաթաթած թաշկինակներում, դրած էին նոցա տան մի անկիւնում որպէս սրբութիւն, ճրագ էին վառում նոցա առջև, և մերձենում էին նորանց մարդիք, երբ մինին հարկաւոր էր երդում տալ նոցա վերայ, կամ որ և իցէ հիւանդի գլխին դնել բժշկելու նպատակաւ։ Եկեղեցական դասը իւր տգիտութեամբ յետ չէր մնում խաւար ժողովրդից, որոնք կոչում էին իւրեանց գրիգորեան, և նեստորական քրիստոնեաներ, բայց ոչինչ գիտակցութիւն չունէին իւրեանց դաւանութեան վարդապետութիւնից։ Կրօնքը նոցա մէջ պայմանաւորվում էր մի քանի արտաքին ծէսերով և աւանդութիւններով միայն

Ես նկատեցի, քարոզչի խօսքերը բոլորովին հեռու չէին ճշմարտութիւնից, որովհետև ես ինքս շատ տեղերում ականատես էի եղել Հայերին և Ասորիներին դեռ ևս նոյն դրութեան մէջ։

—Իսկ այժմ։ Հարց արի ես։

—Հայերը նոյն դրութեան մէջն են որպէս յառաջ։ Պատասխանեց Քարոզիչը։ Որովհետև մեք դեռ նոր եմք սկսել գործել նոցա մէջ։ Մեր ժողովրդի մեծ մասը բաղկացած է Ասորիներից, դուք նոցա ամէն մինի տանում կը գտանէք բազմաթիւ տպագրած հատորներ Աստուածաշնչի և զանազան կրօնական գրքերի, նոր և կենդանի լեզուով։ Նոցա ամէն մինը գիտէ գրել կարդալ, և ճշմարիտ քրիստոնեայի պարտականութիւնքը ճանաչել։

—Ինչ օգուտներ կարող է ունենալ մի այդպիսի ստրկացած ազգի համար, որպէս Ասորիներն են լոկ կրօնական կրթութիւնը։ Հարց արի ես։

—Մեք ունիմք երկու մեծ վարժարաններ, մինը այս քաղաքում մեր տան մէջ աղջիկների համար, միւսը Սիր-զաղի կոչուած ամարանոցում, տղայների համար։ Այդ վարժարաններում, բացի կը-

բոնքը, աշակերտները և աշակերտուհիք ուսանում են, և զանազան այլ առարկաներ ու արհեստներ, որպիսի են ընդհանուր պատմութիւն, մաթեմատիկայ, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, ֆիզիկայ, քիմիայ և այլն։ Մի խօսքով, այդ երկու վարժարաններում մեք պատրաստում ենք քարոզիչներ, վարժապետներ և վարժապետուհիք, ուսուցչութիւն անելու գիւղօրայքի երկսեռ տարրական վարժարաններում, որոնցից զուրկ չէ ոչ մի գիւղ, ուր մեք ունէինք փորը ի չատէ ժողովուրդ։

—Մտանելով Ռրմիոյ գաւառում, ասացի ես ամէն տեղ նկատել եմ, ձեր ժողովուրդը թէև մտաւորապէս և բարոյապէս բաւականին զարգացած են, բայց այդ չոր ու ցամաք կրթութիւնը նոցա նիւթական կեանքի և ապրուստի ապահովութեանը ոչինչ չէ նպաստում։ Աստրին տակաւին նոյն տարիական դրութեան մէջն է, որպէս յառաջ, նա որպէս մի անբան անասուն գործում է միմիայն կալուածատէր խաների օգտին։ Եւ այդ տարկութիւնը, որ նորա վայրենութեան ժամանակ նորան զգալի չէր, այժմ անտանելի է դարձել, երբ նա հասկացել է, թէ ինչ նշանակութիւն ունի մարդկայնութիւնը, ազատութիւնը և իրաւունքը։

—Ինչ կարող էիք անել մեք նոցա նիւթականը ապահովելու համար։ Հարցրուց քարոզիչը։

—Դուք կարող էիք նոցա որդիներին սովորեցնել ուսման հետ և զանազան արհեստներ։ Պատասխանեցի ես։

—Մի այդպիսի միտք ունեցաւ մեր ընկերներից մինը Մատեր Ստաքինը. նա Ուրմիի Անղալի կոչուած մասնում, որ պարունակում է իր մէջ շատ ընդարձակ տարածութիւն խիստ բերրի հողի, Գօվչան անունով գիւղում, չմնաց մի ամրոց, ուր միտք ունէր հիմնել բազմարուեստեան ուսումնարան, ուր աշակերտները պիտի սովորէին ուսման հետ և զանազան արհեստներ, որպիսի՞ն հիւսնութիւն, դարբնութիւն, կոշկակարութիւն, դերձակութիւն, և այլն. այլ և գիւղատնտեսութիւն և երկրագործութիւն։ Վերջինիս մասին, գործնական փորձեր անելու համար, նա Շահից ստացաւ ընդարձակ դաշտեր, և բերել տուաւ Ամերիկայից զանազան երկրագործական անօթներ. և ինքը ուղեւորուեցաւ դէպի Ամերիկայ, վարժապետներ բերելու այդ արհեստները սովորեցնելու համար։ Բայց դժբախտաբար մահը վախճան տուեց այդ բոլոր նպատակներին։

—Շատ ցաւում եմ, մի այդպիսի օգտաւէտ ձեռնարկութիւնը չէ յաջողուել։ Միայն ձեր առաքելութիւնը կարող է իրագործել նոյն նպատակները, որ ձեր հանգուցեալ ընկերը իր հետ դերեզման տարաւ։

—Այո, մեք ես արհեստագիտութիւն սովորելու նպատակաւ մի քանի պատանիք յուղարկել ենք Մալթայ կղզին, որ նոքա դառնալով իւրեանց հայրենակցիներին մէջ տարածէին նորան։ Բայց դիտնական երկրագործութիւնը մի քանի պատճառներով այստեղ չէ կարող յաջողուել։

—Որպիսի պատճառներով։ Հարց արի ես։

—Առաջին պատճառն այն է, որ գիւղացիք այստեղ հող չունեն, այլ ամբողջ երկիրը պատկանում է կալուածատէր խաներին, երկրորդ, գիտնական երկրագործութիւնը այստեղ շատ ծախս է պահանջում, մինչդեռ հողի բերքը աւելի գին չունի։

—Իսկ արհեստները այդպէս չեն. կարեցի ես քարոզչի խօսքը. Գարսիկները արդէն սկսել են, ոչ իւրեանց գլուխը, այլ արտաքին բաները, որպիսիք են, տան կահկարասիքը, հագուստը, զէնքերը, չինութեան ձևերը, փոքր առ փոքր նմանացնել եւրոպացիներին, այդ բաները եւրոպական նմանութեամբ արուեստագործող մարդը կարող է ապահովել իւր ապրուստը։

—Այդ ուղիղ է։ Պատասխանեց քարոզիչը և և մտածութեան դնայ։

—Ոչ միայն ուղիղ է, այլ վերին աստիճանի ճշմարտութիւն։ Իմ ճանապարհորդութեան մէջ, Ռուսաստանում, Տաճկաստանում, մինչև ես տեսել եմ Ուրմեցի Ասորին, հարիւրաւոր անձինքներից խումբեր կազմած, դիմում են դէպի պանդխտութիւն, այդ բախտաւորները մաշվում են փնթում են օտար երկրներում, շատ քչերին նոցանից յաջողվում է դառնալ իւրեանց հայրենիքը, երևում է, այդ մարդիքը իւրեանց երկրում ապրուստ ճարելու հնարներ չունեն։

—Այստեղ միայն հայի խնդիրը չէ, պարոն, որ սարսափեցնում է նորանց դէպի օտար աշխարհներ գնալ, դուք չը գիտէք թէ քանի ծանր պարտաւորութիւններ դրած են նոցա վերայ Կառավարութիւնից և գիւղատէր աղայներից, որոնց լրացնելու համար նոքա ստիպուած են թողուլ իւրեանց հայրենիքը և օտար աշխարհներում արծաթ վաստակել։

Մեր խօսակցութիւնը շատ երկար ձգեց, քարոզիչը խօստացաւ մանրամասնապէս պատմել ինձ այդ երկրի գիւղացիների դրութիւնը, որ ես էլ հետևապէս կը հաղորդեմ ձեզ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ասում են, որ իշխան Նապոլէօնը (Նապոլէօն III-ի հօրեղբօր որդին) որ այժմ Փարիզումն է, հրաւիրվում է Ֆրանսիական տէրութեան կողմից թողնել Ֆրանսիայի սահմանները։

—Անրի Բոչֆորը իր բանտի մէջ նորերումս աւարտել է մի մեծ բօման (վիպասանութիւն) որ և պիտի տպվի կամ „Le Temps“ կամ „Rappel“ լրագրում։

—Այս տարի Շվեյցարիայի Լուգանօ քաղաքում հաւաքվեցաւ խաղաղութեան և աղատութեան վեցերորդ միջազգային ժողովը։ Ժողովի նպատակն է ոչքան կարելի է թէ լրագրութեան, թէ դրականութեան, թէ ընկերութիւնների միջոցով տարածել ազգերի մէջ խաղաղութեան գաղափարը և ժամանակով նպաստել պատերազմի երևոյթը ազգերի միջից վերցնելուն։ Քաղաքականութեան մէջ ժողովը ունի նպատակ մոցնելով միջազգային խաղաղ յարաբերութիւնները, այժ տալ աղնութեան գաղափարի իրագործելուն և ընդմարդել նահապետական կոպիտ ոյժի, բռնի իրաւունքի գործածութեանը ազգերի մէջ փոխադարձ յարաբերութիւններում։ Ի հարկէ ժողովի զօրութիւնը բարոյական է միայն և մինչև անգամ նորա դրամական միջոցները երևում են շատ չնչին։

—Բէրլինի Բէյխստագի նստերը կը բացվին չուտով և դերմանական տէրութիւնը պէտք է առաջարկէ պարլամէնտի քննութեանը լրագրներից հարկ վերցնելու խնդիրը։ Կարծում են որ պարլամենտը կը յայտնէ իր կատարեալ համակրութիւնը այդ վերանորոգութեան։

—„Indépendance Belge“ լրագրում կարդում ենք, որ սեպտեմբերի 29-ին (հոկտ. 11-ին) Մադրիտի ծովային արքունական գործարանի մէջ խռովութիւն է եղել։ Մշակները 1500 թուով ապստամբվեցան, կանչելով „կեցցէ դաշնակցական հանրապետութիւն“։ Ուղարկվեցաւ զօրքը ապստամբվածների դէմ։

—Գերմ. „Allgemeine Zeitung“ լրագիրը ասում՞է որ Կուբա կղզու վրա ապստամբութիւնը իսպանական տէրութեան դէմ բոլորովին վերջացրած չէ, թէև Իսպանիայի տէրութիւնը քանի անգամ պաշտօնական հաղիւների մէջ յայտնել է նորան դրեթէ վերջացած։ Կուբայի բնակիչները թէ սև ցեղերից (նեգրերը) թէ սպիտակները բոլորովին երկպառակութիւն միմեանց մէջ չունենալով ծառայում են ապստամբվածների զօրքի մէջ և մեծ քաջութեամբ են կռւում իսպանացիների դէմ։ Նոցա զվարարը դեներալ Պէրէցն է և օֆիցերների մեծ մասը սպիտակ ցեղին է պատկանում։ Նոքա ոչք անընդունակ են ծառայելու ներգործական զօրքում, մեծ եռանդով պարապում են արնտեսական մասին, և հաւաքնում են զօրքին հարկաւոր պաշար։

ԻՍՐՆ ԼՈՒՐԵՐ

Ահա հայ գիւղացիների մտոտիապաշտութեան մի օրինակ։ Մի օտարերկրեայ հայ Երևանի գաւառում ճանապարհորդելով, գիշերը իջևանումէ մի հայոց գիւղի մէջ։ Այն օրը պաս էր և մեր ճանապարհորդը քաղցած լինելով, չը նայեց ընդունված կանոնին և պատրաստեց իր համար մի քանի խաչած ձու։ Այդ իմանալով, հայ գիւղացի տանտէրը անասելի կերպով վրդովվեցաւ. „դու իմ տունս պղծեցիր, ասեց ու՝՝՝հրամայեց ճանապարհորդին թողնել իսկոյն իր տունը՝՝՝

* * *

Կ. Պոլսի „Մասիս“ լրագրում կարդում ենք հետևեալը։ „Դաղղիայի հռչակաւոր համալսարաններէն մէկուն, այն է Կրինեսոնի երկրագործական համալսարանին տարեկան քննութեանց մէջ Հաղդի մէկը հանդիսացաւ ամենէն քաջ. այս է պ. Ոստանիկ Տ. Մարգարեանց, որ առաջին կարգը դասուեցաւ և իր ուսմանց վկայագրին հետ ընկալաւ նաև ոսկի նշանը (մէտայլ) որ երկրագործութեան և վաճառականութեան մինիստրին կողմանէ գիտութիւնն աւարտող խումբին առաջնոյն միայն կը շնորհվի“։

Պ. Մարգարեանցը վանեցի է։ Նորա մասին խօսում են այժմ ոչ թէ միայն Կ. Պոլսի բոլոր լրագիրները, այլ և ֆրանսիական և անգլիական քանի մի պարբերական թերթերը։

* * *

Մեզ գրումեն. սեպտեմբեր ամսի վերջերում վերին Ազուլիսում պատահել է դարձեալ մի եղեռնագործութիւն։ Տիրոջս Յարութիւն Տէր Գաբրիէլեան անունով մինը դիշերն իւր այգին պահելու ժամանակ աւազակները թափվումեն նորա վերայ և խեղդումեն։ Իսկ իւրեանց մասին կասկածանաց առիթ չը տալու համար պարկեցնումեն իւր անկողնի մէջ։ Զարմանումենք որ այդպէս յաճախ պատահումեն այդ կողմերում սպանութիւններ։

* * *

Զվաշիր գաւառի Մարայ կամ Ղազալի գիւղից մեզ հաղորդումեն, թէ այստեղ երկու լեզգիներ, միմեանց հետ սխ ունելով, հանդիպումեն միմեանց, մինը իւր խէնջալը կոխումէ միւսի փորը իսկ միւսը, իւր խէնջալով նորա վզին է զարկում, երկուսն էլ սպանվումեն։

* * *

„Մասիս“ լրագիրը հաղորդումէ որ Կ. Պոլսում հիմնվեցաւ մի նոր գիշերօթիկ դպրոց աղջկանց համար։ Դպրոցի անօրէն է Ամերիկայէն եկած գերազանց դաստիարակութեան տէր և հմուտ մի վարժուհի, որին գործակից է ուրիշ Ամերիկացի բժիշկ օրիորդ մի, որ աչակերտաց առողջութեանը հոգ կը տանի։ Անգլիերէն, արդի և հին Հայերէն, ինչպէս նաև Ցաճկերէն լեզուած ուսմանը համար ամենէն յարմար միջոցները ձեռք առնուած են։

* * *

Ասարխանից գրումեն մեզ։ „Այստեղի հայերը առանց փաստի հաստատումեն որ իրենք աղգասէր են, բայց այնուամենայնիւ օտարազգի լրագիրները մեծ քանակութեամբ թափուած են նրանց դրասեղանների վերա, որովհետև барышниները և господները առհասարակ սիրումեն միայն կարդալ և գրել օտար լեզուներով։ Եաներում, гуляніներում, маскарадներում և այդ տեսակ увеселеніներում հարիւրներով են մսխում, իսկ մի չնչին գումար խնայումեն армянскій լրագիր ստանալու համար՝՝՝

* * *

Մեր ընթերցողներին յայտնի է մեր լրագրում տպված յայտարարութենից տիկին Սիմոնովիչի մանկական պարտէզի մասին։ Այժմ Թիֆլիսում բացվումէ հոկտեմբերի 15-ից դարձեալ մի մանկական պարտէզ տիկին Ֆէօդորովի կառավարութեան տակ, որ և կը գտնվի Գոլովինսկի պրոսպէկտի վերա։

ԹԻՖԼԻԶԻ ՓՈՍՏԸ։

—

Ռուսաստան, Արտասահման ամեն օր

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ։ Քութայիս, Գարբանդ և Երևանգաւառը։

ԵՐԵՔՇԱԲԹԻ։ Բագու, Գանջա, Շուշի, Շամախի։

ՉՈՐՔՇԱԲԹԻ։ Քութայիս, Երևան, Ախալցխա Դարբանդ։

ՀԻՆԳՇԱԲԹԻ . . . .

ՈՒՐԲԱԹ։ Քութայիս, Երևան, Ախալցխա Զաքաթալ, Նուխի։

ՇԱԲԱԹ Բագու, Դարբանդ, Գանջա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 18-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպերիալ)	6 ռ.	28	կ.
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պօլս.			
վճարելիք (լիրա Օսմանեան) .	6 „	28	„
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	5 „	50	„
„ Ամերիկայի սերմից .	7 „	50	„
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի	12—13 „	—	—
ՇԱՔԱՐԸ Ռոսի (Բրօցկու)	8 „	30	„
„ „ միւս տեսակը . .	8 „	20	„
„ զագրանիցու տրանցիդ.	5 „	80	„
մաքսը վճարած	8 „	80	„
ՇԱՔԱՐԱԻԱԶԸ Ռոսի.	7 „	30	„
ԲՈՒՐԴԸ Թուչի	9 „	80	„
„ Թարեքեամի	6 „	50	„
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	13 „	—	—
„ Մարտինիկոյի, ցածրը .	12 „	50	„
„ Մօկո, շատ լաւը . . .	16 „	—	—
ՊՂՊԵՂԸ.	12 „	—	—
ԵՐԿԱԹ.	3 „	50	„
ՄՈՄ	11 „	20	„
ԱԼԻՒԻՐԸ կրուպսչատկայ Ռուսաստանի բէրքը փութը.	3 „	60	„
ԱԼԻՒԻՐԸ կրուպսչատկա Ախվերդեանի տեղական ջաղացից (Գեանջայում). . . . . № 1 փութ	3 „	20	„
„ № 2 „	2 „	40	„
„ № 3 „	2 „	10	„
ԱԼԻՒԻՐԸ Գեանջու հասարակ . .	1 „	90	„
„ Շորագեալու	1 „	80	—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 6-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ $33^{7}/_{32}$ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ $353^{1}/_{2}$ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ 148

Երկրորդ 147

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Молодой, человѣкъ, кончившій курсъ въ Тифлисской Классической гимназіи желаетъ давать уроки по всѣмъ предметамъ гимназическамъ, главнымъ образомъ по математикѣ, физикѣ, и по языкомъ: латынскому и русскому. Онъ же приготовляетъ дѣтей во всѣ среднія учебныя заведенія.

Адресъ можно узнать въ редакціи газеты „Мшакъ“.

Լոր բացված գործակատարութեան գրասենեակ (ագէնտստվо) Փոթի քաղաքում։

Բարձրագոյն հաստատված „Վոլգա“ (Волга) անունով, ծովի, գետերի և երկրի վրայ ապահովութեան ընկերութիւն, որ իր գործակատարութեան մէջ 18 օտարերկրեայ ընկերութիւնների հետ յարաբերութիւն ունի։

Ընդհանուր ապահովացնող դրամագլուխ. 17,254,000 ռ.

Տեղեկացնում եմ պատուելի հասարակութեանը, որ ցանկացողները իրանց բեռները ապահովացնելու համար, բարեհաճեն դիմել ագէնտստվոյին, որ գտնվում է իմ սեպհական տանը Փոթի քաղաքում, հայոց փողոցի վրա (Поти. армянская улица) Տելեգրաֆի ստանցիայի կողմը։

Գործակատար „Վոլգա“ ապահովութեան ընկերութեան։

Տիգրան Յակոբեան Վանցեանց։

Въ КАБИНЕТѢ моемъ, находящемся на Бебутовской улицѣ, въ домѣ Чепмаритова, составляются дѣловыя бумаги, какъ—то: прошенія, апелляціи, кассаціи и проч. и также проекты разнаго рода юридическихъ актовъ и обязательствъ.

Плата возможно умѣренная.

Петръ Антоновичъ Чарековъ.

Честь имѣемъ довести до свѣдѣніи почтеннѣйшей Тифлисской публики, что мы расширили свою торговлю, открывъ второй магазинъ въ домѣ Харазова, на Эриванской площади, кромѣ существующаго въ Театральномъ зданіи Тамамшевыхъ, подъ № 29 и 30.—Рекомендуя свой магазинъ покупателямъ, спѣшимъ заявить, что часть товаровъ уже *получена изъ Заграницы.*

Цѣны умѣренныя.

Чайгештовъ и Тамазовъ

Дозволено Цензурою. Тифлисъ, Октября 19, 1872 г. Տէրէթէլի և ընկ. (նախկին Դուբէլիրի) տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի։